Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

Ընդունված է

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի

Արբիտրաժային խորհրդի

22.01.2026 թվականի թիվ 01 որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐԲԻՏՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՑԱՆԿԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026

Հոդված 1. Որոշման կիրառության շրջանակը

1. «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Կենտրոն) Արբիտրաժային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից ընդունված «Կենտրոնի արբիտրների ցանկում ընդգրկվելու պահանջները, ընթացակարգը և ցանկից հեռացնելու կարգը սահմանելու մասին» որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանվում են թեկնածուին Կենտրոնի արբիտրների ցանկում (այսուհետ՝ Արբիտրների ցանկ) ներառելու պահանջներն ու ընթացակարգը, ինչպես նաև արբիտրին Արբիտրների ցանկից հեռացնելու հիմքերն ու կարգը:

Հոդված 2. Կենտրոնի Արբիտրների ցանկը

1. Արբիտրաժային վարույթի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Կենտրոնը վարում է արբիտրների ցանկ, որը բաղկացած է երկու առանձին ենթացանկերից՝ նախատեսված ազգային արբիտրների և միջազգային արբիտրների համար:

2. Արբիտրների ցանկը համալրվում է տարեկան երկու անգամ՝ ապրիլ և դեկտեմբեր ամիսներին՝ հիմք ընդունելով ստացված դիմումները, կամ Կենտրոնի քարտուղարության առաջարկությամբ:

3. Արբիտրների ցանկը կարող է հրապարակվել Կենտրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Հոդված 3. Կենտրոնի արբիտրների ցանկում ընդգրկվելու համար թեկնածուին ներկայացվող նվազագույն պահանջները

1. Արբիտրի թեկնածուն կարող է ներառվել Արբիտրների ցանկում, եթե համապատասխանում է հետևյալ նվազագույն պահանջներին՝

1) ստացել է բարձրագույն իրավաբանական կամ այլ վերաբերելի ոլորտում կրթություն, միաժամանակ անցել է Կենտրոնի կամ այլ միջազգային

կենտրոնների կամ հաստատությունների կողմից կազմակերպված արբիտրաժի վերաբերյալ վերապատրաստում(ներ), և

2) ունի մասնագիտական բարի համբավ և բարձր բարոյական հատկանիշներ,

3) ունի առնվազն տասը (10) տարվա մասնագիտական փորձառություն վեճերի լուծման, իրավական կամ մասնագիտական որոշակի ոլորտներում (օրինակ՝ կառուցապատման, էներգետիկայի, սպորտի, տեխնոլոգիայի, ներդրումների ոլորտներում),

4) ունի իր կողմից տիրապետվող լեզուներով հստակ և պատճառաբանված արբիտրաժային վճիռ կազմելու և բարդ հարցերը գնահատելու կարողություն:

2. Միջազգային արբիտների ենթացանկում ներառվելու համար, ի հավելումն սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների՝ թեկնածուն պետք է՝

1) ունենա միջազգային վեճերի լուծման փորձ, և

2) ունենա առնվազն հինգ (5) կազմված միջազգային արբիտրաժային վճիռներ:

3. Թեկնածուն չի կարող ներառվել Արբիտրների ցանկում, եթե՝

1) Արբիտրների ցանկում ներառվելու դիմում ներկայացնելու պահին չի լրացել նրա 25 տարին, կամ

2) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ կամ սնանկ,

3) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, կամ նրա նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում,

4) վարքագծի կանոնների կոպիտ խախտման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Հոդված 4. Արբիտրների ցանկում ներառվելու վերաբերյալ դիմումը և կից փաստաթղթերը

1. Արբիտրների ցանկում ընդգրկվելու համար թեկնածուն պետք է

Կենտրոնի քարտուղարություն (այսուհետ՝ Քարտուղարություն) ներկայացնի Որոշման հավելվածով սահմանված կարգով լրացված դիմումի ձևաթուղթը:

2. Դիմումին կից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմների կամ հավաստագրերի պատճենները, ինչպես նաև Կենտրոնի կամ այլ միջազգային կենտրոնների կամ հաստատությունների կողմից արբիտրաժի թեմայով վերապատրաստում(ներ) անցած լինելը հաստատող փաստաթղթեր,

2) առկայության դեպքում՝ հավաստագրեր, լիցենզիաներ կամ այլ փաստաթղթեր, որոնցով հավաստվում է թեկնածուի մասնագիտական, տեխնիկական կամ որոշակի ոլորտներում մասնագիտացվածությունը կամ որակավորումը,

3) առնվազն երկու (2) գրավոր կարծիքներ/բնութագրեր գործընկերների կամ հաստատությունների կողմից, որոնք ծանոթ են թեկնածուի մասնագիտական որակավորումներին կամ կարողություններին,

4) թեկնածուի՝ վերլուծական և իրավական փաստաթղթեր կազմելու ունակությունները հավաստող գրավոր օրինակներ, մասնավորապես՝

ա) ազգային արբիտրների ենթացանկում ներառվելու համար՝ առնվազն երկու
պատճառաբանված արբիտրաժային վճիռներ, դատական ակտեր (ապանձնավորված), կամ առնվազն երկու (2) գիտական հոդվածներ,

բ) միջազգային արբիտրների ենթացանկում ներառվելու համար՝ առնվազն հինգ
պատճառաբանված արբիտրաժային վճիռներ (ապանձնավորված), որոնք թեկնածուն կազմել է միջազգային արբիտրաժային վարույթներում:

3. Քարտուղարությունը, ըստ անհրաժեշտության, կարող է լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկատվություն պահանջել թեկնածուից՝ հաստատելու վերջինիս որակավորումները, փորձը կամ մասնագիտական համբավը:

Հոդված 5. Դիմումի քննությունը և Խորհրդի որոշումը

1. Արբիտրների ցանկում ներառվելու դիմումների ուսումնասիրությունն իրականացնում է Խորհուրդը:

2. Քարտուղարությունը Արբիտրների ցանկում ներառվելու դիմումը և կից փաստաթղթերը ներկայացնում է Խորհրդին՝ դրանք ուսումնասիրելու և որոշում կայացնելու համար:

3. Խորհուրդը գնահատում է դիմումի համապատասխանությունը Որոշման 3-րդ հոդվածով սահմանված պահանջներներին և հաշվի է առնում հետևյալ հանգամանքները՝

1) թեկնածուի մասնագիտական փորձի մակարդակը, շրջանակը և վերաբերելիությունը, և

2) դիմումին կից ներկայացված արբիտրաժային վճիռների, դատական ակտերի, գիտական հոդվածների գրավոր օրինակների որակը, հստակությունը և պատճառաբանվածության մակարդակը,

3) շահերի բախման իրավիճակի, այդ թվում՝ կողմնակալության հնարավոր ռիսկերի կամ բացահայտման ենթակա հանգամանքների առկայությունը,

4) թեկնածուի նշած լեզուների տիրապետման մակարդակը, տեխնիկական հմտությունները և որպես արբիտր հանդես գալու ընդհանուր պատրաստվածությունը,

5) թեկնածուի հասանելիությունը և արբիտրաժային վարույթի շրջանակներում ստանձնած պարտավորությունների արդյունավետ կատարման կարողությունը,

6) թեկնածուի բարեվարքությունը, մասնագիտական համբավը և էթիկայի կանոններին հետևելու հակվածությունը,

7) ցանկացած այլ հանգամանք, որը Խորհրդի գնահատմամբ կարող է կիրառվել թեկնածուի համապատասխանությունը որոշելու համար:

4. Ըստ անհրաժեշտության, Խորհուրդը կարող է պահանջել պարզաբանումներ, հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր կամ հարցազրույց

անցկացնել թեկնածուի հետ:

5. Դիմումի բավարարման կամ մերժման մասին որոշումը ընդունվում է նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Դիմումը բավարարելու դեպքում թեկնածուն ընդգրկվում է Արբիտրների ցանկում:

6. Քարտուղարությունը թեկնածուին ծանուցում է Խորհրդի որոշման մասին այն կայացնելու պահից մեկ շաբաթյա ժամկետում:

Հոդված 6. Արբիտրին Արբիտրների ցանկից հեռացնելու հիմքերը

1. Արբիտրների ցանկում ներառված արբիտրի հեռացման վերաբերյալ միջնորդությունը ներկայացնում է Քարտուղարությունը կամ Խորհրդի անդամը:

2. Արբիտրին հեռացնելու գրավոր միջնորդությունը պետք է ներառի՝

1) արբիտրի անունը, ազգանունը, ինչպես նաև կոնտակտային տվյալները, և

2) հեռացման համար հիմք հանդիսացող փաստական և իրավական հիմքերը,

3) միջնորդությունը հիմնավորող ապացույցներ, ներառյալ՝ փաստաթղթեր, վկայություններ, բողոքներ կամ բացարկի առնչությամբ տվյալներ,

4) միջնորդությամբ ներկայացվող պահանջը՝ արբիտրին ցանկից հեռացնելու կամ ժամանակավորապես հեռացնելու վերաբերյալ:

3. Արբիտրների ցանկից արբիտրին հեռացնելու հիմքերն են՝

1) արբիտրի մահը, կամ

2) արբիտրի գրավոր դիմումը,

3) Որոշման 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հանգամանքների ի հայտ գալը,

4) Կենտրոնի Արբիտրների վարքագծի կանոնների կոպիտ խախտումները,

5) երբ Արբիտրների ցանկում ներառվելուց հետո պարզվում է, որ այդ ցանկում ընդգրկվելու համար թեկնածուն ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող, կեղծ կամ մոլորեցնող տեղեկություններ, կեղծված կամ

խարդախությամբ ստացված փաստաթղթեր, կամ այլ կերպ դրսևորել է մոլորեցնող վարքագիծ,

6) հաստատվել է արբիտրի կողմից վարքագծի կանոնների խախտում, կոռուպցիոն բնույթի արարք, խարդախություն կամ էթիկայի խախտում, որն անհամատեղելի է արբիտրի բարեվարքության հետ,

7) գործունակության կամ ձեռնահասության կորուստ, ներառյալ՝

ա) հիվանդությունը, անաշխատունակությունը կամ հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որն անհամատեղելի է արբիտրի գործունեության հետ, կամ այն դարձնում է անհնարին, կամ

բ) արբիտրի՝ գործառույթների կատարման որակի էական անկումը, այդ թվում՝ պարբերաբար ուշացված վճիռներ, թերի կազմված վարութային փաստաթղթեր կամ ընթացակարգային չարաշահումներ,

8) նախկին կամ առկա շահերի բախման իրավիճակների չբացահայտելը, ինչպես օրինակ՝

ա) արբիտրի անաչառության վրա ազդող հանգամանքները ժամանակին չբացահայտելը, կամ

բ) որպես արբիտր նշանակվելուց հետո պարզվում է, որ արբիտրը չի բացահայտել շահերի բախման իրավիճակը կամ հարաբերությունը, որը խաթարում է վերջինիս անկախության և անաչառության նկատմամբ վստահությունը:

4. Այն դեպքում, երբ արբիտրին ցանկից հեռացնելու հիմքերը հիմնավորված են, Խորհուրդը կարող է, հաշվի առնելով հանգամանքների բնույթը և (կամ) խախտումների ծանրությունը, կայացնել արբիտրին ցանկից ժամանակավորապես հեռացնելու մասին որոշում:

Հոդված 7. Արբիտրների ցանկից արբիտրին հեռացնելու միջնորդության քննությունը և Խորհրդի որոշումը

1. Քարտուղարությունը Խորհրդի կողմից միջնորդության ստացման պահից

ողջամիտ ժամկետում արբիտրին գրավոր ձևով ծանուցում և տրամադրում է՝

1) միջնորդության և կից փաստաթղթերի պատճենները, և

2) հայտնում է Քարտուղարության կողմից սահմանված ժամկետում գրավոր պատասխան ներկայացնելու իրավունքի մասին,

3) ըստ անհրաժեշտության՝ ուղարկում է Խորհրդում հարցազրույցի կամ լսումների հրավեր:

2. Արբիտրը կարող է ներկայացնել գրավոր պատասխան, ապացույցներ և լսումներ անցկացնելու միջնորդություն:

3. Խորհուրդը, իր հայեցողությամբ, սահմանում է միջնորդության քննության ընթացակարգը և ժամկետը: Որպես կանոն՝ գրավոր միջնորդության քննության ժամկետը ստացման պահից չի կարող գերազանցել 30 օրը:

4. Բոլոր գրավոր միջնորդությունները, ապացույցները հետազոտելուց և ըստ հայեցողության լսումներ անցկացնելուց հետո Խորհուրդը կայացնում է որոշում՝ արբիտրին Արբիտրների ցանկից հեռացնելու, ժամանակավորապես հեռացնելու կամ միջնորդությունը մերժելու վերաբերյալ: Որոշումն ընդունվում է նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

5. Խորհրդի որոշումները վերջնական են:

6. Քարտուղարությունը որոշման կայացման պահից մեկ շաբաթյա ժամկետում այդ մասին ծանուցում է արբիտրին:

7. Խորհրդի կողմից արբիտրի հեռացման մասին որոշում կայացնելու դեպքում արբիտրը հեռացվում է Արբիտրների ցանկից:

8. Խորհրդի կողմից արբիտրին ժամանակավորապես հեռացնելու մասին որոշում կայացվելու դեպքում արբիտրը ժամանակավորապես հեռացվում է Արբիտրների ցանկից և կարող է վերականգնվել ցանկում միայն Խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելուց հետո:

9. Արբիտրների ցանկից ժամանակավորապես հեռացվելու դեպքում արբիտրը կարող է վերականգնվել Խորհրդի կողմից որոշված մեկ կամ մի քանի պայմանները բավարարելու դեպքում: Այդպիսի պայմանները կարող են ներառել, ի թիվս այլնի՝

1)արբիտրաժի վերաբերյալ վերապատրաստումը բարեհաջող ավարտելը,

2) որոշման հիմք հանդիսացած հանգամանքների վերացումը,

3) Խորհրդի կողմից սահմանված այլ պայմաններ:

10. Կենտրոնը կարող է հրապարակել արբիտրին Արբիտրների ցանկից հեռացնելու հակիրճ տեղեկատվություն՝ վստահության ու թափանցիկության երաշխավորման նպատակով:

Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ՀԱՎԵԼՎԱԾ

ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ
ԱՐԲԻՏՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Արբիտրաժային խորհրդի «Կենտրոնի արբիտրների ցանկում ընդգրկվելու պահանջներն ու ընթացակարգը, ցանկից հեռացման կարգը սահմանելու մասին» որոշմամբ սահմանված կարգով)

1. ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դաշտ	Տեղեկատվություն
անուն, ազգանուն, հայրանուն	
ծննդյան ամսաթիվ	
ազգություն / քաղաքացիություն	☐ Հայաստանի Հանրապետություն ☐ Եվրոպական Միություն (_____) ☐ այլ: _____
մասնագիտական գործունեության հիմնական վայրը (պետություն/տարածք)	
ծանուցման/բնակության հասցե	
հեռախոսահամար	
էլ. փոստի հասցե	
հաղորդակցության նախընտրելի եղանակ	☐ էլ. փոստ ☐ հեռ. ☐ փոստ ☐ այլ: _____

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Կրթություն

Խնդրում ենք լրացնել Ձեր կրթությանը և գիտական աստիճանին վերաբերող տվյալները՝ սկսելով վերջին ստացածից:

Աստիճան	Հաստատություն	Տարի	Մասնագիտություն

Մասնագիտական որակավորումներ / փաստաբանական գործունեության արտոնագիր

Որակավորում / լիցենզիա	Շնորհող մարմին	Տրման տարին	Ներկա կարգավիճակ

Անդամակցություն (առկայության դեպքում)

Հաստատություն	Ընդունման տարին	Ներկա կարգավիճակ

3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁ

*Խնդրում ենք լրացնել աղյուսակը ստորև **կամ** դիմումին կից ներկայացնել Ձեր ինքնակենսագրականը:*

Պաշտոն / կոչում	Կազմակերպություն	Տևողություն (սկիզբ-վարտ)	Հիմնական պարտականություններ

Ընդհանուր մասնագիտական փորձ: _____ տարի

Խնդրում ենք ընտրել Ձեր մասնագիտացման ոլորտները, որոնցում ունեք վերաբերելի մասնագիտական փորձ՝

☐ Միջազգային առևտուր
☐ ՏՏ կամ տվյալների պաշտպանություն
☐ Քաղաքացիական և պայմանագրային

☐ Սպորտ
☐ Կորպորատիվ
☐ Հեռահաղորդագրություն և մեդիա իրավունք
☐ Կառուցապատում և ճարտարապետություն
☐ Բժշկություն/դեղագործություն
☐ Էներգետիկա (նավթ, գազ, վերարտադրվող էներգիա)
☐ Ապահովագրություն
☐ Ներդրումային արբիտրաժ
☐ Շրջակա միջավայր և կլիմայական փոփոխություններ
☐ Բանկային և ֆինանսական ծառայություններ
☐ Փոխադրում / ավիացիա
☐ Մրցակցային իրավունք
☐ Աշխատանքային իրավունք
☐ Անշարժ գույք
☐ Ընտանեկան, հարևանային
☐ Այլ:

_____:

4. ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Փորձառության տեսակ	Հաստիք / գործառույթ	Հաստատություն / գործի հղում	Փորձառության տևողություն
Արբիտր (միանձնյա / տրիբունալի անդամ կամ նախագահ)			
Իրավախորհրդատու / ներկայացուցիչ			
Փորձագետ (իրավական / տեխնիկական / ֆինանսական)			
Հաշտարար			
Քարտուղարության աշխատակից			

Վերապատաստող / դասախոս / բանախոս			
Հեղինակ / վերլուծաբան / հետազոտող			
Այլ վերաբերելի փորձ (խնդրում ենք մանրամասնել)			

Մասնակցած արբիտրաժային վարույթների քանակ (եթե առկա են):

_____

Կազմված արբիտրաժային վճիռների քանակ (եթե առկա են): _____

Դուք հանդես եկե՞լ եք միջազգային արբիտրաժներում որպես արբիտր:
☐ Այո ☐ Ոչ
Եթե այո, խնդրում ենք հակիրճ ներկայացնել:

_____
_____
_____
_____

5. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԲԻՏՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

5.1. Դուք երբևէ ներառվե՞լ եք, կամ ներկայում ներառվա՞ծ եք որևէ արբիտրաժային հաստատության արբիտրների ցանկում:
(Եթե այո՝ խնդրում ենք նշել և մանրամասները ներկայացնել)

	Հաստատության տեսակ	Հաստատության անվանում(ներ)	Ներառված լինելու տարի(ներ)

☐	Ազգային		
☐	Միջազգային		

5.2. Դուք աշխատե՞լ եք Կենտրոնի հետ համագործակցության հուշագիր կնքած արբիտրաժային հաստատությունների հետ, կամ ներառվա՞ծ եք այդ հաստատությունների արբիտրների ցանկերում:
(Եթե այո, խնդրում ենք նշել այդ հաստատությունները)

	Հաստատություն	Երկիր/տարածք	Նշել
1	Իրանի առևտրի պալատին կից գործող արբիտրաժային կենտրոն (ACIC)	Իրանի Իսլամական Հանրապետություն	☐
2	Ամերիկյան Արբիտրաժի Ասոցիացիա (AAA)	ԱՄՆ	☐
3	Աստանայի միջազգային ֆինանսական կենտրոնի դատարան (AIFC) և Միջազգային արբիտրաժային կենտրոն (IAC)	Ղազախստան	☐
4	Սիլիկոնյան հովիտի արբիտրաժի և հաշտարարության կենտրոն (SVAMC)	ԱՄՆ	☐
5	Վիեննայի միջազգային արբիտրաժային կենտրոն (VIAC)	Ավստրիա	☐
6	Միլանի արբիտրաժային պալատ (CAM)	Իտալիա	☐
7	Արդի արբիտրաժի ռուսական կենտրոն (RIMA)	Ռուսաստանի Դաշնություն	☐
8	Աթենքի հաշտարարության և արբիտրաժի կազմակերպություն (EODID)	Հունաստան	☐

6. ԼԵԶՈՒՆԵՐ

Լեզուներ, որոնց միջոցով Դուք կարող եք անցկացնել բանավոր լսումներ, մասնակցել խորհրդակցությունների և կազմել արբիտրաժային վճիռներ և վարութային փաստաթղթեր:
Խնդրում ենք նշել բոլոր կիրառելի լեզուները

Տարածաշրջանային լեզուներ

☐ Հայերեն ☐ Ռուսերեն
☐ Վրացերեն ☐ Պարսկերեն
☐ Թուրքերեն

Այլ լեզուներ

☐ Անգլերեն	☐ Ուկրաիներեն	☐ Ճապոներեն
☐ Ֆրանսերեն	☐ Հունարեն	☐ Հնդկերեն
☐ Իսպաներեն	☐ Ռումիներեն	☐ Եփրայերեն
☐ Գերմաներեն	☐ Շվեդերեն	☐ Կորեերեն
☐ Իտալերեն	☐ Լեհերեն	☐ Չինարեն (Մանդարին)
☐ Պորտուգալերեն	☐ Արաբերեն	☐ Սուահիլի

Այլ: _____.

7. ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Խնդրում ենք տրամադրել **առնվազն երկու մասնագիտական բնութագրեր տրամադրած անձանց կոնտակտային տվյալները**, *ինչպես նաև կցել գրավոր բնութագրերը կամ երաշխավորագրերը*, որոնք վկայում են արբիտրաժի, հաշտարարության կամ այլ վերաբերելի ոլորտներում Ձեր որակավորումների, փորձառության և մասնագիտական համբավի վերաբերյալ:

Բնութագիր տվողի անունը	**Պաշտոն / հաստատություն**	**Կոնտակտային տվյալներ (էլ. փոստի հասցե և հեռախոսահամար)**

8. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով ես՝ *դիմումատուի անուն, ազգանուն*, հայտարարում եմ՝

1. Դիմումում ներառված տվյալները և կից փաստաթղթերը իմ իմացության շրջանակներում **<u>ճիշտ են, համապատասխանում են իրականությանը և ամբողջական են:</u>**
2. Ես **<u>բավարարում եմ և համապատասխանում եմ</u>** Արբիտրաժային խորհրդի որոշմամբ սահմանված Թեկնածուներին առաջադրվող նվազագույն պահանջներին:
3. Ես ունեմ **<u>բարձր բարոյական հատկանիշներ և մասնագիտական բարի համբավ</u>**, և **<u>ես չեմ ենթարկվել քրեական կամ կարգապահական պատասխանատվության</u>** մասնագիտական կամ վարքագծի կանոնների կոպիտ խախտումների համար:
4. Ես պարտավորվում եմ իմ ստանձնած արբիտրաժային պարտականությունները իրականացնել **<u>անկախ, անաչառ, բարեխիղճ, ամբողջական և խիստ գաղտնապահ կերպով</u>**՝ Կենտրոնի կանոններին և կիրառելի վարքագծի կանոններին համապատասխան:
5. Ես տալիս եմ իմ **<u>գիտակցված համաձայնությունը</u>** Կենտրոնին **<u>գրանցելու/վարելու, հաստատելու և հրապարակելու իմ անձնական տվյալները</u>**՝ իմ դիմումը գնահատելու և դիմումի բավարարման դեպքում՝ Կենտրոնի Արբիտրների ցանկում հրապարակելու նպատակներով:

9. ԱՐԲԻՏՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____, սույնով **տալիս եմ իմ համաձայնությունը** Կենտրոնի Արբիտրների ցանկում ներառվելու կապակցությամբ:

Մասնավորապես, ես Կենտրոնին առանց վերապահումների լիազորում եմ՝

☐ **ներառել իմ անունը/պրոֆիլը** Կենտրոնի Արբիտրների ցանկում,

☐ Կենտրոնի Արբիտների ցանկում **<u>հրապարակել և ներառել</u>** իմ վերաբերյալ մասնագիտական տեղեկատվություն, ներառյալ իմ անձնական նկարը, կարճ ինքնակենսագրականը, մասնագիտական ոլորտները և կոնտակտային տվյալները/կապի միջոցները, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք վերաբերում եմ Կենտրոնի գործունեության հետ:

Ստորագրություն: _____

Ամսաթիվ: _____

Վայր: _____

<u>ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ</u>

☐ Դիպլոմների և հավաստագրերի պատճեններ
☐ Արբիտրաժի վերաբերյալ վերապատրաստումների հավաստագրեր
☐ Մասնագիտական գործունեության որակավորումների հավաստագրեր կամ լիցենզիաներ (առկայության դեպքում)
☐ Երկու մասնագիտական գրավոր բնութագրեր կամ երաշխավորագրեր
☐ Գրավոր նմուշներ (վճիռներ, կարծիքներ կամ գիտական հոդվածներ)
☐ Ինքնակենսագրական (Հայերեն կամ անգլերեն տարբերակը)
☐ Անձը հաստատող փաստաթղթի պատճեն (կարող է ներկայացվել անձի ինքնությունը պարզելու նպատակով)

***ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Դաշտ	**Մանրամասներ**
ՍՏԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ	/ / 20__
ՍՏԱՑՎԵԼ Է	ԿՈՂՄԻՑ
ԴԻՄՈՒՄԻ ՀԱՄԱՐ	ARB/APL _____-20___
ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	☐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ☐ ԿԻՍԱՏ
ԽՈՐՀՈՒՐԴ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ	/ / 20__
ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ	